ՀՀ Մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհուրդը հաստատել է «Էրեբունի հնավայրի միջնաբեր



2017թ. ապրիլի 7-ին Էրեբունի արգելոց-թանգարանում կայացել է ՀՀ Մշակույթի նախարարության Գիտամեթոդական խորհրդի արտագնա նիստը, որի օրակարգում «Էրեբունի հնավայրի միջնաբերդի մասնակի վերականգնման և այցելուների սպասարկման արդիականացման նախագծի» առաջին փուլում իրականացված աշխատանքների ներկայացումն ու քննարկումն է եղել: Նիստին ներկա են գտնվել Գիտամեթոդական խորհրդի նախագահ, ՀՀ Մշակույթի նախարարի տեղակալ Ա. Սամուելյանը, խորհրդի անդամները և նշված նախագծի հեղինակային խմբի անդամները: Նախագծի ներկայացման ընթացքում «Էրեբունի» արգելոց-թանգարանի տնօրեն, նախագծի աշխատանքների համակարգող Գ. Գյուրջյանը ներկայացրել է նախագծի կառուցվածքը` անդրադառնալով նախագծային աշխատանքների ընթացքին:

Նախագծային խմբի ճարտարապետ-վերականգնողները մանրամասն ներկայացրել են հնավայրի ցանկապատման և անցակետերի կառուցման, պորտիկի վերականգնման աշխատանքային նախագծերը, Խալդի տաճարի ու պալատի վերականգնման և ամրակայման, կարասային սրահի մասնակի վերականգնման, ուրարտական խոհանոցի և ենթակառուցվածքների ստեղծման, ամֆիթատրոնի և սպասարկման սրահի կառուցման էսքիզային նախագծերը: Նախագծի քննարկման ընթացքում եղել են առաջարկություններ և դիտարկումներ փորձագետների կողմից, որոնք նախագիծն իրականացնող մասնագետները կներառեն առաջիկա աշխատանքային փուլերում:

Գիտամեթոդական խորհրդի անդամները, ընդհանուր առմամբ, մեծ գոհունակություն են հայտնել նախագծային աշխատանքների վերաբերյալ: Հաստատելով նախագիծը` խորհրդի նախագահ Ա. Սամուելյանը շնորհակալություն է հայտնել և շնորհավորել հեղինակային խմբի անդամներին` «Էրեբունի հնավայրի միջնաբերդի մասնակի վերականգնման և այցելուների սպասարկման արդիականացման նախագիծը» կյանքի կոչելու համար:

1 / 1